« PARFUM D'ARMÉNIE » : LE RÊVE PARTAGÉ AVEC *YERAZ*

Le 20 septembre dernier, grâce à l'aide financière de la ville de Lille et de l'État et au soutien du Centre social du Faubourg de Béthune, nous avons enfin pu voir le spectacle de *Yeraz* et le travail de nos jeunes danseurs qui se sont préparés pendant un an.

Environ 250 personnes étaient présentes dans la salle *Concorde* qui n'avait pas connu pareil spectacle depuis longtemps. Bien sûr, beaucoup d'Arméniens étaient présents mais il y avait également des personnes du quartier et du Centre social, d'autres venaient de la métropole curieux de cette culture qu'ils ne connaissaient pas.

Les témoignages de satisfaction ont été très nombreux autant pendant l'entracte autour des pâtisseries préparées par nos cuisinières préférées (Jacqueline(s), Gohar, Valentina, Christina(s), Margarit, Siranouche, Haykouche, Tamar, Anna, Lilik…) qu'à la fin du spectacle. La richesse de la culture arménienne, la jeunesse et l'enthousiasme de la troupe, la qualité de la chorégraphie ont été remarquables et ont provoqué une émotion profonde et contagieuse.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՅՐԵՐԸ» ԵՐԱԶ՝ ԿԻՍՎԱԾ «ԵՐԱԶ» ՀԱՄՈՒՅԹԻ ՀԵՏ

Սեպտեմբերի 20-ին, ի շնորհիվ պետության և Լիլ քաղաքի ֆինանսական օգնության, Ֆոբուր դը Բեթյունի Մշակույթի տան օժանդակությամբ մենք վերջապես հնարավորություն ունեցանք դիտելու «Երազ» համույթի ներկայացումը և մեր երիտասարդ պարողների աշխատանքի արդյունքները:

Մոտ 250 հանդիսատես ներկա էին «Կոնկորդ» դահլիճում, որտեղ երբևիցե նման ներկայացում դեռ տեղի չէր ունեցել: Իհարկե, դահլիճում գտնվողների մեծ մասը հայեր էին: Ներկա էին նաև թաղամասի բնակիչներ և Մշակույթի տան աշխատակիցներ, ինչպես նաև մարդիկ, որոնց Լիլի հարակից քաղաքներից այստեղ էր բերել զուտ հետաքրքրասիրությունը անծանոթ այս մշակույթի նկատմամբ:

Մարդկանց դեմքերի գոհունակությունը նկատելի էր ինչպես ընդմիջման ժամանակ մեր սիրելի խոհարարների՝ երկու Ժաքլինների, Գոհարի, Վալենտինայի, Քրիստինաների, Մարգարիտի, Սիրանուշի, Աննայի, Հայկուշի, Թամարի, Լիլիկի և այլոց պատրաստված խմորեղենների սեղանների շուրջ, այնպես էլ միջոցառման ավարտին: Հայ մշակույթի հարստությունը, համույթի երիտասարդ պարողների խանդավառությունը և խորեոգրաֆիայի որակը պարզապես հրաշալի էին: Այս ամենը ստեղծեց հարուստ և վարակիչ հուզումներ:

Photos réalisées par Bernard Dupont, membre d'*Ararat* — Լուսանկարները՝ «Արարատ» միության անդամ Բեռնար Դյուպոնի

La troupe *Yeraz* à Lille, sur la scène de la salle *Concorde*, 20.09.2008, «Երազ» պարի խումբը՝ Լիլում, «Կոնկորդ» դահլիճի բեմի վրա

Vous trouverez ci-dessous le témoignage de Saphia, elle-même danseuse et Présidente de l'association *Métisses et Sages*.

« Samedi soir, je suis allée en Arménie ! Je n'ai pas quitté Lille, certes. Je me suis juste rendue à une soirée organisée par *Ararat*, l'association des Arméniens du Nord. C'était dans un quartier populaire appelé « Faubourg de Béthune ». Précisons en passant qu'à mon humble avis, Lille n'est faite que de quartiers « populaires » !

Nous étions arrivés largement en avance, par l'entrée des artistes. Une vingtaine de danseurs s'activait déjà dans les loges, des valises, des costumes s'entassaient

Ստորև ձեզ ենք ներկայացնում Սաֆիայի տպավորությունները: Վերջինս պարուհի է, «Խառնածին և խոհեմ» (*Métisses et sages*) միության նախագահը:

«Շաբաթ երեկո տեղափոխվել էի Հայաստան: Անշուշտ, Լիլում էի: Ես պարզապես ներկա գտնվեցի Նորդի շրջանի հայկական «Արարատ» միության կազմակերպած երեկոյին, որը տեղի ունեցավ Լիլի սոցիալապես քիչ ապահով թաղամասերից մեկում, որի անունն է Ֆոբուր դը Բեթյուն: Չմոռանանաք պարզաբանել, որ Լիլ քաղաքը, ըստ իմ համեստ կարծիքի, կազմված է ճիշտ այդպիսի թաղամասերից:

Այդ օրը մենք ժամանակից ավելի շուտ էինք եկել և դահլիճ մտել ծառայողական մուտքով, ինչպես Լիլ ժամանած պարողները:

un peu partout. Une femme brune, vêtue de noir circulait parmi eux, vigilante, mais paisible : c’était la directrice artistique de la compagnie de danse *Yeraz* (« Rêve », en arménien), Christina Galstian. Son visage à la peau mate, ses cheveux, ses yeux sombres lui donnaient un air plus marocain qu’arménien mais son allure altière, son aplomb laissaient deviner une formation académique, dans la grande tradition slave.

Le spectacle qu’elle présentait, *Parfums d’Arménie*, avait rencontré un beau succès à Paris il y a deux ans. Une troupe de soixante danseurs avait donné le meilleur d’elle-même pendant deux heures, l’équipe avait bénéficié de solides appuis techniques : un éclairagiste du *Théâtre du Soleil* avait su mettre en valeur des tableaux somptueux, nimbés de poésie et d’onirisme.

Anna et Christina lors de la préparation des costumes
Աննան ու Քրիստինան՝ հագուստները պատրաստելիս

Mais ici à Lille, nous étions dans la salle *Concorde*. La troupe était réduite de moitié et le spectacle ne durerait qu’une heure. Imaginez une scène sans coulisses, un rideau noir pour tout décor, une grosse enceinte, quelques spots, et vous aurez une idée des conditions mises au service de cette création ! Ces contraintes ne semblaient heureusement pas avoir offensé la fierté de la directrice artistique : Christina Galstian fait partie de ces artistes portés par un engagement humain tel qu’il leur permet de surmonter avec une réelle humilité et une constante motivation beaucoup de situations délicates !

À vrai dire, la magie a opéré, malgré tout. Les danseurs se sont élancés avec une fougue qui a d’emblée conquis le public.

Parfums d’Arménie est un hommage à l’âme arménienne, exprime un attachement organique à la terre natale. On y évoque les fontaines qui abreuvent, les rivières auprès desquelles on se repose, les végétaux, par exemple, des lierres qui enrubannent les corps graciles de danseuses aux tresses infinies, les pétales de fleurs… Les chorégraphies ressuscitent de douces scènes champêtres, d’espiègles amourettes. L’énergie juvénile de gaillards aux torses recouverts d’une peau de mouton, les cris joyeux de la troupe sont communicatifs. Décidément, je regrette qu’il n’y ait pas beaucoup de « Lillois » dans ce public ! Le spectacle est d’une simplicité fraîche et naïve, les costumes sont beaux, une avalanche de couleurs lumineuses, des voiles scintillants, des lancers de pétales, de paillettes, viennent égayer les cœurs alourdis par le chagrin. Il y en a sûrement beaucoup dans la salle.

À côté de moi est assise une femme d’une cinquantaine d'années. Elle vit depuis six ans en France. Comme beaucoup d’Arméniens ici présents, elle a connu la précarité des logements insalubres, le 115, les *Restaurants du Cœur*, l’angoisse des files d’attente à la Préfec-

Մոտ 20 պարող և պարուհի ջանասիրաբար պատրաստվում էին արտիստական առանձնասենյակի վերածված միջանցքում: Շուրջբոլորը կարելի էր տեսնել ներկայացմանը պատրաստվողների ճամպրուկներն ու համազգեստները: Մի թխահեր կին՝ սև հագնված, ուշադիր, բայց հանգիստ քայլվածքով շրջում էր նրանց միջով: Դա «Երազ» համույթի գեղարվեստական ղեկավար Քրիստինա Գալըստյանն էր: Իր թուխ մաշկով, մուգ գույնի մազերով ու աչքերով նա ավելի շատ մարոկկացու տպավորություն էր թողնում, քան թե հայի: Սակայն նրա հպարտ և ինքնավստահ կեցվածքը խոսում էր նրա ստացած ակադեմիական կրթության մասին՝ լավագույն սլավոնական ավանդույթների համաձայն:

Նրա ներկայացրած «Հայաստանի բույրերը» ներկայացումը երկու տարի առաջ մեծ հաջողություն էր ունեցել Փարիզում: Մոտ 60 պարողներից բաղկացած համույթը երկու ժամ տևող ներկայացման ընթացքում իրեն դրսևորել էր լավագույն ձևով: Բեմադրությունը հագեցված էր բարդ տեխնիկական միջոցներով. «Արևի թատրոն»ի (Théâtre du Soleil) լույսի օպերատորին հաջողվել էր արժևորել պոեզիայով և երևակայությամբ հագեցված հիանալի տեսարանները:

Բայց այստեղ՝ Լիլում, մենք գտնվում էինք «Կոնկորդ» դահլիճում: Ներկա էր միայն խմբի կեսը, իսկ համերգը տևելու էր ընդամենը մեկ ժամ: Պատկերացրեք առանց կուլիսների բեմ, միայն մեկ սև վարագույր՝ որպես դեկորացիա, մի մեծ բարձրախոս, մի քանի լուսարձակներ և կարող եք պատկերացում կազմել այս ստեղծագործական աշխատանքը իրականացնելու համար ստեղծված պայմանների մասին: Այս ամենը, բարեբախտաբար, չէր էլ վհատեցնում Քրիստինա Գալստյանին: Նա այն ստեղծագործողներից է, որոնք օժտված լինելով մարդկային պատասխանատվության մեծ զգացումով, յուրաքանչյուր բարդ իրավիճակից դուրս են գալիս պատվով և էլ ավելի նպատակամղված:

Christina Galstian lors de la préparation des danseurs lillois
Քրիստինա Գալստյանը՝ լիլաբնակ պարողներին նախապատրաստելիս

Չնայած ամեն ինչին՝ «հրաշք»ն, այնուամենայնիվ, կայացավ: Պարողները բեմ բարձրացան մի այնպիսի խանդավառությամբ, որ ամբողջ դահլիճը ցնցվեց:

«Հայաստանի բույրերը» բեմադրությունը մեծարման մի տուրք է հայ հոգուն և մայր հողի հետ նրա անքակտելի կապին: Ներկայացվեցին տարբեր պատկերներ. շատրվաններ, որոնցով կարելի էր ծարավը հագեցնել, գետակներ, որոնց ափերին կարելի էր հանգըստանալ, բուսապատկերներ, օրինակ՝ ծաղիկների թերթիկներ, բաղեղներ, որոնք ժապավենների նման փաթաթված էին անվերջանալի վարսեր ունեցող պարուհիների հեզաճկուն մարմինների շուրջը: Խորեոգրաֆիկ բեմականացումները վերարտադրում էին դաշտերի ու անցողիկ սիրային պատմությունների տեսարաններ: Ոչխարի մորթուց կարված բաճկոններ հագած կայտառ տղաների պատանեկան էներգիան և պարողների ցնծալի կանչերը հաղորդակցման լավ միջոց էր: Իհարկե, կարելի էր ցավալ, որ հանդիսատեսների մեջ «բնիկ լիլեցիներ» քիչ կային: Ներկայացումը պարզ էր և թարմացնող, զգեստները՝ գեղեցիկ: Պայծառ գույների և շողշողուն

ture… Actuellement, elle partage avec son fils et cinq autres familles régularisées une maison située dans l'agglomération. Elle fait du ménage et garde des enfants. « *Je préférerais arrêter les ménages*, me confie-t-elle. *Je n'en ai plus la force physique* ».

Les danseuses gracieuses de *Yeraz* sur la scène lilloise
«Երազ»ի հեզաճկուն պարուհիները՝ Լիլի բեմի վրա

Ce soir, nous sommes tous heureux. Il est vrai qu'il y a quelque chose de rassurant dans ce spectacle : chacun renoue avec un passé idyllique, un monde stable et insouciant que pérennisent les rondes de gracieuses jeunes filles, les danses conquérantes de robustes campagnards optimistes.

Et pourtant, un rappel dramatique avait eu lieu dès le début du spectacle. Un coup de feu avait figé brutalement l'enjouement des premières danses. Le souvenir du génocide s'était imposé. Toute la joie qui allait nous être offerte, toute la vitalité des danses se diffuseraient maintenant en dépit de ce traumatisme originel, le Massacre du peuple arménien.

En fin de soirée, je me suis approchée de Christina Galstian. Je lui ai proposé ce bref entretien, qu'elle a tout de suite accepté.

S. : *Je voudrais que vous parliez de votre univers créatif. Je m'intéresse aux danses du Maghreb et du Proche-Orient, et curieusement, j'ai retrouvé dans Parfums d'Arménie de nombreux échos aux questions que je me pose dans ce domaine. Commençons par un thème commun, celui des racines. Vous avez dédié cette création à votre terre. D'ailleurs, on observe dans chacune de vos chorégraphies à quel point cet attachement est fort, vous le communiquez par exemple en évoquant toute une nature, des paysages, on entend le clapotis de l'eau…*

C.G. : Oui, j'ai vécu 18 ans en Arménie, et je suis en France depuis 18 ans. Je suis à un moment de ma vie très significatif : j'ai une grande nostalgie pour cette terre qui

վարսաքողերի հոսքը, ծաղկաթերթիկների և փայլուն թղթերի նետումները փարատում էին վշտով ծանրացած սրտերը: Այդպիսի սրտեր դահլիճում, բնականաբար, քիչ չէին:

Կողքիս հիսունին մոտ մի կին էր նստած, ով արդեն վեց տարի է, ինչ բնակվում է Ֆրանսիայում: Այստեղ ապրող շատ հայերի նման նա էլ է անցել ժամանակավոր կացարաններով, 115-ով, բարեգործական «Հոգու ռեստորաններ»ով, պրեֆեկտուրայի հերթերի տագնապներով… Որդու և հինգ ուրիշ ընտանիքների հետ միասին նա այժմ բնակվում է Լիլի արվարձանների շենքերից մեկում: Զբաղվում է հավաքարարությամբ և երեխաներ է պահում: «Ես կնախընտրեի թողնել հավաքարարությունը, ուժերս էլ չեն ներում»,- ինձ հետ կիսվեց նա:

Բայց այդ երեկո մենք բոլորս երջանիկ էինք: Այս ներկայացման մեջ կարծես թե վստահություն ներշնչող մի բան լիներ: Հեզաճկուն աղջնակների շուրջպարերը, հողի լավատես մշակների առնական և խրոխտ պարերը հավերժացնում էին յուրաքանչյուրի մեջ կարոտալի, կայուն և անհոգս անցյալը:

Սակայն, այնուամենայնիվ, ներկայացման սկզբում մի հոգեհույզ հիշեցում տեղի ունեցավ: Մի կրակոց վայրագորեն սառեցրեց առաջին պարերի խանդավառությունը: Դա Եղեռնի հուշն էր, որ իր մասին զգալ տվեց: Ամբողջ ուրախությունը, որ պետք է պարգևեր պարերի կենսունակությունը, այժմ մեզ էր փոխանցվում ի դեմս այդ ցավի՝ հայոց Մեծ եղեռնի:

Երեկոյի վերջում ես մոտեցա Քրիստինա Գալստյանին և խնդրեցի մի փոքրիկ հարցազրույց, ինչին նա միանգամից համաձայնվեց:

Ս. : *Կցանկանայի, որ մի քիչ խոսեք Ձեր ստեղծագործական աշխարհի մասին: Ինձ միշտ հետաքրքրել են Մագրեբի և մերձավորարևելյան երկրների պարերը: «Հայաստանի բույրերը» ներկայացման մեջ ես կարծես թե գտա այդ ոլորտում ինձ հուզող բազմաթիվ հարցերի պատասխանները: Սկսենք ընդհանուր թեմայից՝ արմատներից: Դուք նվիրել եք այս ստեղծագործությունը Ձեր հողին: Իմիջիայլոց, Ձեր բոլոր բեմականացումների մեջ կարելի է նկատել, թե որքան սերտ է այդ կապը: Դուք դա հաղորդում եք, օրինակ, ոգեկոչելով մի ամբողջ բնաշխարհ, կարելի է անգամ լսել ջրի կարկաչյունը:*

Christina et Anna, nos professeurs de danse, avec Christina Galstian
Մեր պարուսույցները՝ Քրիստինան և Աննան, Ք. Գալստյանի հետ

Ք.Գ. : Այո՛: Ես ապրել եմ Հայաստանում 18 տարի: 18 տարի առաջ էլ եկել եմ Ֆրանսիա: Այս պահին ես թևակոխում եմ իմ կյանքի մի որոշիչ ժամանակահատված: Հայրենիքս կարոտում եմ ավելի ու ավելի: Ահա այդ կարոտն է, որ ես փորձում եմ գտնել իմ ստեղծագործությունների մեջ:

Ս. : *Ամբողջովին նվիրված Ձեր արմատներին՝ այսպիսի մեծ փորձից հետո Ձեզ չի՞ մտահոգում այս հարցը. «Այժմ, երբ ես արդեն ամեն կերպ արտահայտել եմ իմ կապվածությունը Հայաստանին,*

me manque de plus en plus. C'est pourquoi, j'ai éprouvé le besoin de la retrouver dans mes créations.

S. : *Après cette expérience forte, passionnément consacrée à vos origines, vous est-il arrivé de vous demander : « Maintenant que j'ai tout dit de mon attachement à l'Arménie, comment ne pas me répéter ? Que me reste-t-il encore à exprimer ? »*

C.G. : Justement, c'est exactement le problème qui se pose à moi en ce moment, et que j'essaie de résoudre. J'ai en effet construit mon spectacle en puisant essentiellement dans les ressources du folklore… même si ce soir vous en avez vu une version abrégée. Nous avons dû supprimer de nombreux passages et mettre en avant des tableaux festifs, des évocations du folklore champêtre car nous ne pouvions pas mettre en scène les tableaux intimistes, plus imaginatifs, qui exigent un éclairage plus subtil.

S. : *Craignez-vous que ce folklore emprisonne votre imaginaire ?*

C.G. : J'y réfléchis beaucoup. Je sais que mon pays sera toujours présent dans mes créations, il fait partie de moi, mais j'ai aussi envie de parler d'autre chose. En ce moment, je travaille beaucoup autour du thème du départ. Je pense que je vais élargir l'univers folklorique, grâce à l'intérêt que je porte pour d'autres champs artistiques, comme le théâtre, la poésie. Pour ce qui est de la musique, je n'utiliserai pas que des musiques arméniennes, je procéderai davantage par collages, ou superpositions si vous préférez. Déjà, dans *Parfums d'Arménie*, le *Requiem* de Mozart surgit entre deux thèmes. De plus, vous avez sans doute remarqué que l'on entend la voix d'une vieille femme. C'est une rescapée du génocide. Je vais étendre ce principe de superposition, dans le futur.

S. : *Puisque vous parlez de ce moment qui ouvre le spectacle, cette évocation du massacre, de la mort, je dois avouer que je commence juste à mesurer ce soir à quel point le génocide est présent dans la conscience arménienne actuelle.*

C.G. : Oui, c'est un fardeau, c'est un poids. Je ne peux pas ne pas en parler si je veux rester fidèle à la mémoire historique de mon peuple. Je voudrais aussi que ce génocide fasse partie intégrante de l'histoire universelle. J'ai commencé le spectacle en l'évoquant, c'était incontournable. Mais vous voyez j'ai voulu dépasser le désespoir suscité par ce massacre : la danse s'arrête quelques instants, mais elle reprend, malgré tout. Je voudrais transmettre un message d'espoir, un message positif.

S. : *Qu 'est-ce qui vous permet de surmonter ce fardeau, d'une façon générale ?*

C.G. : Comme je vous l'ai dit la poésie. J'aime des poètes qui ont une faille, une folie, comme Parouïr Sévak. J'aime aussi un poète très sombre, réaliste, aux textes baignés de mélancolie : Vahan Teryan… Il parle beaucoup de la pluie, de l'automne, du sentiment de l'éphémère. Mais j'aime aussi beaucoup la pensée de Sénèque, son aptitude à forger une joie de vivre un bonheur, en dépit d'une hérédité lourde, en dépit du fardeau des générations passées. (elle réfléchit) J'aime les expressionnistes… Et j'aime surtout le cinéaste Paradjanov, vous le connaissez ?

S. : *Oh oui ! C'est aussi pour moi une grande référence. Je l'ai découvert il y a vingt ans et je l'ai longtemps considéré comme un « père spirituel artistique ». C'est* vous dire, comme j'apprécie Paradjanov !

C.G. : J'ai toujours à l'esprit les danses qui sont dans ses films. Vous savez, j'ai analysé plan par plan chacun d'eux. Je me suis beaucoup inspirée de ses films : *La cou- leur de la grenade, Sayat-Nova, La forteresse de Souram.*

ինչպե՞ս անեմ, որ ինքս ինձ չկրկնեմ: Ի՞նչ նոր ձևով կարող եմ արտահայտվել»:

Ք.Գ. : Հիրավի՛, այս պահին այդ հարցն ինձ շատ է հուզում, և ես փորձում եմ լուծում գտնել: Իրականում, այս ներկայացումը ստեղծելիս, որից դուք այսօր դիտեցիք միայն մի հատված, ես հիմնականում սմվել եմ ժողովրդական մշակույթի աղբյուրներից: Մենք ստիպված էինք այսօրվա ներկայացումից հանել շատ հատվածներ՝ առաջին պլան մղելով տոնական պատկերներ՝ ոգեկոչելով դաշտահանդեսների ազգային մշակույթը, որովհետև չէինք կարող բեմադրել սեփական երևակայության պատկերներ, որոնք պահանջում են ավելի հստակ և յուրահատուկ լուսավորություն:

Ս. : *Դուք չե՞ք վախենում, որ երևակայականը դառնա ազգայինի պատանդը:*

Ք.Գ. : Այդ ուղղությամբ ես շատ եմ մտածում: Գիտեմ, որ հայրենիքի թեման միշտ ներկա կլինի իմ ստեղծագործությունների մեջ, որովհետև դա իմ մի մասն է: Բայց ես ցանկություն ունեմ նաև խոսելու այլ բաներից: Այս պահին ես շատ եմ աշխատում արտագաղթի թեմայի վրա: Ես հետաքրքրվում եմ նաև արվեստի այլ բնագավառներով՝ թատրոն, պոեզիա, ինչն ինձ օգնում է ընդլայնել ազգային մշակույթի աշխարհը: Ինչ վերաբերում է երաժշտությանը, ապա ես չեմ անդրադառնա միայն հայկական երաժշտությանը, այլ ավելի շատ կօգտագործեմ կոլաժներ կամ համադրումներ, եթե այդ տերմինն ավելի նախընտրելի է Ձեզ համար: Արդեն «Հայաստանի բույրերը» ներկայացման մեջ թեմայափոխությունը կատարվում է Մոցարտի «Ռեքվիեմ»ով: Բացի դրանից դուք, կարծում եմ, ուշադիր էիք և լսեցիք մի տարեց կնոջ ձայն: Նա եղեռնից մազապուրծ եղածներից է: Ապագայում ես ավելի կընդլայնեմ «համադրման» սկզբունքը:

Ս. : *Քանի որ խոսեցինք ներկայացման սկզբնամասի մասին, որն անդրադարձավ կոտորածի և մահվան թեմային, ապա պետք է խոստովանեմ, որ ես արդեն սկսում եմ պատկերացնել, թե ինչ աստիճանի է եղեռնը ներկա արդի հայ գիտակցության մեջ:*

Ք.Գ. : Այո՛, դա մի ծանր բեռ է: Ես չեմ կարող դրա մասին չխոսել, եթե ուզում եմ հավատարիմ մնալ իմ ժողովրդի պատմական հիշողությանը: Կցանկանայի նաև, որ հայոց եղեռնը համաշխարհային պատմության մի անքակտելի մասը կազմի: Իմ ներկայացումը սկըսվեց եղեռնի թեմայից, որը շրջանցել հնարավոր չէ: Բայց դուք նաև նկատեցիք, որ ես ցանկացել եմ հաղթահարել կոտորածի հետևանքով առաջացած հուսալքումը. պարը մի պահ կանգ է առնում, բայց անկախ ամենից՝ նորից շարունակվում է: Ես կցանկանայի հույսի ուղերձ և դրական լիցք հաղորդել:

Ս. : *Ընդհանուր առմամբ, ի՞նչն է Ձեզ ուժ տալիս հաղթահարելու այդ ծանր բեռը:*

Ք.Գ. : Ինչպես ասացի, դա պոեզիան է: Ես սիրում եմ այն բանաստեղծներին, որոնք խոցելի են, ունեն խենթություն, ինչպես Պարույր Սևակը: Սիրում եմ նաև մի տխուր, մելամաղձոտ բանաստեղծի, որի տողերը ընկղմված են թախծի մեջ: Դա Վահան Տերյանն է: Նա շատ է գրում անձրևի, աշնան, անցողիկ զգացմունքների մասին: Սիրում եմ նաև Սենեկայի մտքերը, նրա երջանկություն ապրելու և ուրախություն կերտելու կարողությունը՝ անկախ ստացած ծանր ժառանգությունից և նախորդ սերունդներից փոխանցված բեռից: (նա մտորում է) Սիրում եմ նաև էքսպրեսիոնիստներին… Եվ հատկապես սիրում եմ Փարաջանովին: Դուք նրան ճանաչու՞մ եք:

Ս. : *Այո՛, իհա՛րկե: Նա ինձ համար էլ է մեծ հեղինակություն: Ես նրան բացահայտեցի քսան տարի առաջ, և երկար ժամանակ արվեստի մեջ նա ինձ հաար կատարում էր «հոգևոր հոր» դեր: Այս ամենն ասում եմ նրա համար, որ տեսնեք, թե ինչքան եմ գնահատում Փարաջանովին:*

Ք.Գ. : Հիշողությանս մեջ մինչև այսօր տպավորված են նրա ֆիլ-մերի մեջ տեղ գտած պարերը: Գիտե՛ք, ես դրանք մեկառմեկ ուսումնասիրել եմ: Ես շատ եմ ոգեշնչվել նրա ֆիլմերով՝ «Նռան գույնը», «Սուրամի ամրոցը», «Սայաթ-Նովա»:

Ս. : *Ելնելով Ձեր ասածներից՝ ես ավելի լավ եմ ընկալում Ձեր նոր աշխատանքի ծավալը: Կարծում եմ, թե խոսքն, արդարև, առանձին կադրերից կազմված շարժումների մասին է, որն, ըստ Փարաջանո-*

S. : Maintenant que vous le dites, je perçois mieux une nouvelle dimension de votre travail. Il y a en effet comme des arrêts sur images, qui donnent aux danses une dimension picturale, dans la lignée de l'esthétique de Paradjanov.

C.G. : Oui. Je me suis nourrie de son univers. Je vais d'ailleurs bientôt écrire un livre sur lui. À son exemple, je voudrais transmettre une émotion avant tout. Vous savez dans la culture arménienne, la générosité et le partage sont des valeurs très importantes…

Nous nous quittons. Je pars en pensant à ce cher Paradjanov. Il est mort dans un hôpital parisien en 1989, je l'avais appris par la radio, de ma chambre de bonne du 13^{e} arrondissement. Saint Paradjanov ou l'artiste en martyr, un lyrisme flamboyant, enivrant… ».

La troupe *Yeraz* et ses responsables ont gardé un excellent souvenir de leur passage à Lille. Le contact demeure et nous aurons peut-être l'occasion de nous revoir. La troupe se produira au complet les 14 et 15 mars prochain au *Casino de Paris*. Qu'on se le dise…

Saphia et Louisette

մի էսթետիկայի, պարին տալիս է մի գեղագրական ծավալ:

Ք.Գ. : Այո՛: Ես շատ բան եմ վերցրել նրա տիեզերական աշխարհից: Իմիջիայլոց, ես շուտով գրելու եմ Փարաջանովին նվիրված գիրք: Հետևելով նրա օրինակին՝ կցանկանայի նախ և առաջ փոխանցել հույզեր: Գիտե՛ք, հայերի համար առատաձեռնությունը և ունեցածը կիսելու ունակությունը շատ կարևոր արժեքներ են…

Այնուհետև մենք բաժանվեցինք: Ես հեռացա՝ մտածելով Փարաջանովի մասին: Նա մահացել է 1989 թ., Փարիզի հիվանդանոցներից մեկում: Նրա մահվան լուրը ես լսեցի ռադիոյով. այդ ժամանակ ապրում էի Փարիզի 13-րդ թաղամասի իմ փոքրիկ սենյակում: Սուրբ Փարաջանով կամ արվեստագետ-նահատակ՝ իր բոցավառ ու արբեցուցիչ լիրիզմով…

«Երազ» համույթը և նրա կազմակերպիչները Լիլից մեկնեցին լավ տպավորություններով լի: Մենք պահպանում ենք մեր կապերը նրանց հետ. ո՞վ գիտե, միգուցե նորից առիթ կունենանք հանդիպելու: «Երազ»ը համերգներ ունի մարտի 14- ին և 15-ին Փարիզի «Կազինո դը Պարի» (Casino de Paris) դահլիճում:

Սաֆիա և Լուիզեթ

Les jeunes danseurs de Lille avant le spectacle de *Yeraz*, 20.09.2008

20.09.2008, Լիլի երիտասարդ պարողները՝ «Երազ»ի ներկայացումից հետո

JOURNEE INTERCULTURELLE DES ASSOCIATIONS

À l'invitation de la Maison des associations de Lille, l'association *Ararat* a participé à une première journée de présentation des différentes cultures de la métropole le 14 septembre 2008. Par cet après-midi ensoleillé nous avons simplement partagé des *khatchapouris*, de l'*akrochka*, en boisson du *tarkhoun*, du vin de grenade, du cognac arménien, ainsi que des confitures d'argousier, de cassis, de cornouiller, de noix et de pétales de rose avec du *lavach*. Merci à Margarit, Jaqueline, Gohar, Siranouche et Lilit de nous avoir fabriqué ces quelques spécialités qui ont eu du succès. Les dégustations ont été accompagnées par des danses africaines, orientales et grecques, par de la musique péruvienne et des contes d'Amérique du Sud. Nous avons pu également goûter et voir fabriquer des nems chinois, du pain à l'huile et au thym de Palestine, des encas croates, de la soupe de Wazemmes, du gâteau anglais…

Bien d'autres cultures étaient représentées par une vingtaine d'associations dans cette belle maison de maître de la rue Royale.

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐ

2008 թ. սեպտեմբերի 14-ին Լիլ քաղաքի Միությունների տան հրավերով «Արարատ» միությունը մասնակցեց մեր ագլոմերացիայի տարբեր մշակույթների ներկայացման առաջին օրվան: Օրվա արևոտ երկրորդ կեսին մենք պարզապես հյուրասիրում էինք խաչապուրի, վարունգապուր, թարխունի ըմպելիք, նռան գինի, հայկական կոնյակ, ինչպես նաև չիչխանի, սև հաղարջի, հոնի, ընկույզի և վարդի մուրաբաներ՝ լավաշի հետ: Շնորհակալություն Մարգարիտին, Ժաքլինին, Գոհարին, Սիրանուշին և Լիլիթին, որոնց պատրաստած ուտեստներն ունեցան մեծ հաջողություն: Համտեսումներն ուղեկցվեցին աֆրիկյան, արևելյան և հունական պարերով, պերուական երաժշտությամբ և Հարավային Ամերիկայի լեգենդներով: Մենք հնարավորություն ունեցանք նաև համտեսելու և տեսնելու, թե ինչպես են պատրաստում չինական նեմերը, պաղեստինյան հացը՝ ձեթով և ուրցով, խորվաթական դոլման, Ուազեմ թաղամասի ապուրը, անգլիական թխվածքը...

Այսպիսով, Ռուայալ փողոցի վրա գտնվող այս շքեղ առանձնատանը ներկայացվեցին մոտ երկու տասնյակ միությունների մշակույթները:

Օգտվելով առիթից՝ մենք ցուցավահանակով և բարձրախոսով մշակութային բազմազանությամբ հետաքրքրվող ներկաներին

Nous en avons profité pour présenter les activités d'*Ararat* sur un stand et au micro à un public curieux de cette diversité culturelle. Nous avons également fait la publicité du spectacle de *Yeraz*.

Louisette et Siranouche présentent quelques produits arméniens
Լուիզեթն ու Սիրանուշը ներկայացնում են հայկական «բարիքներ»ը

L'ensemble des associations a apprécié la manifestation et gageons qu'elles seront encore plus nombreuses l'année prochaine pour la renouveler.

La Maison des associations de Lille a un an d'existence et réunit déjà quelques 350 associations dont la nôtre. Elle propose des manifestations, des formations, des permanences d'experts et un petit journal. Alors, si vous cherchez une information sur les associations à Lille quelqu'en soit le thème (sport, culture, insertion, citoyenneté, santé…), allez-y http://mda.mairie-lille.fr).

Louisette Lamarche

CONCERT DE *DOUDOUK* AU PROGRAMME DU FESTIVAL *JAZZ EN NORD*

Araïk Bakhtikian, musicien arménien, joueur de *doudouk*[1], est venu se produire à Marcq en Barœul le 12 octobre dernier, dans le cadre du festival *Jazz en Nord* et de ses dimanches de l'improvisation.

Cet interprète de *doudouk*, de *zourna* et de *sering* (sorte de pipo) est né en 1962, à Gavar, en Arménie. Son grand-père, joueur de *doudouk*, *zourna*, *sering* et clarinette, était un maître de la région de Sévan. Son père tenait le bourdon lorsque son grand-père jouait. Ainsi, il a grandi dans une famille où le son des instruments à vent était om-

ծանոթացրեցինք «Արարատ» միության կազմակերպած միջոցառումներին, ինչպես նաև գովազդեցինք «Երազ»ի գալիք ներկայացումը:

Ներկա գտնվողները բարձր գնահատեցին այս միջոցառումը: Համոզված ենք, որ գալիք տարի նմանատիպ հանդիպման ժամանակ մասնակից միությունների թիվը կլինի ավելի շատ:

Լիլ քաղաքի Միությունների տունը արդեն մեկ տարի է, ինչ գործում է՝ իր շուրջը համախմբելով մոտ 350 միություն, որոնց թվում է նաև «Արարատ»ը, առաջարկում է միջոցառումներ, վերապատրաստման դասընթացներ, ընդունելություններ՝ մասնագետների մոտ և ամենամսյա թերթ: Եթե դուք փնտրում եք տեղեկատվություն Լիլ քաղաքում գործող տարաբնույթ միությունների մասին՝ (մարզական, մշակութային, մասնագիտական և քաղաքացիական կողմնորոշման, առողջապահական...), այցելեք հետևյալ կայքէջը՝ http://mda.mairie-lille.fr.

Լուիզեթ Լամարշ

ԴՈՒԴՈՒԿԻ ՀԱՄԵՐԳ՝ «ՋԱԶԸ ՀՅՈՒՍԻՍՈՒՄ» ՓԱՌԱՏՈՆԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Հայ դուդուկահար Արայիկ Բախտիկյանը 2008 թ. հոկտեմբերի 12-ին հյուրընկալվել էր Մարք-ան-Բարոլում՝ «Ջազը Հյուսիսում» փառատոնի և կատարողական արվեստի կիրակիների շրջանակներում համերգ տալու:

Դուդուկի[2], զուռնայի և սրնգի այս մեկնաբանը ծնվել է 1962թ. Գավառում (Հայաստան): Նրա պապը Սևանի տարածաշրջանի դուդուկի, զուռնայի, սրնգի և նրբասրնգի ճանաչված նվագող էր: Պապի ելույթների ժամանակ նրա հայրը նվագում էր որպես երկրորդ դուդուկ, այսինքն՝ «դամքաշն» էր: Նա մեծացել է մի ընտանիքում, որտեղ իշխում էր փողային նվագարանների երաժշտությունը: Տասներկու տարեկանում՝ ինքնուրույն շվի նվագել սովորելուց հետո, Ա. Բախ-

[1] Le *doudouk*, proche du flageolet, est le plus célèbre des instruments arméniens. C'est le plus ancien des instruments à double anche. En décembre 2005, l'Unesco a décidé de l'inscrire au patrimoine immatériel de l'humanité. La diffusion du *doudouk* couvre tout le Proche-Orient mais il a trouvé une véritable spécificité chez les Arméniens avec l'utilisation du bois d'abricotier pour la confection du corps. Cela permet de produire un son au timbre particulièrement chaud et riche.

[2] Դուդուկը հայկական նվագարաններից ամենաճանաչվածն է: 2005 թ. դեկտեմբերին Յունեսկոյի որոշումով այն դասվել է մարդկության ոչ նյութական ժառանգության մեջ: Դուդուկը տարածված է ամբողջ Մերձավոր Արևելքում, սակայն միայն հայերի մոտ է, որ նա ձեռք է բերել մի ուրույն յուրահատկություն. նվագարանի պատրաստման համար օգտագործվում է միայն ծիրանենու փայտը, որը հնարավորություն է տալիս ստանալ շատ ավելի հարուստ և ջերմ ձայն:

niprésent. Après avoir tout seul appris à jouer du shevi (flûte à bec) à l'âge de douze ans, A. Bakhtikian, incité par sa mère, découvre le *doudouk*. Ainsi, depuis 14 ans, il est inséparable de cet instrument musical.



Joueur de *doudouk* A. Bakhtikyan Դուդուկահար Ա. Բախտիկյանը

À seize ans, son grand-père l'ammène auprès du grand maître Djivan Gasparian qui habitait le même quartier. Depuis, celui-ci restera son seul maître. En 1982, il devient étudiant du Conservatoire national d'Erevan d'où il sort diplômé en 1987. La même année, il reçoit le premier prix du Concours national arménien *Sayat-Nova* avec une pièce de Komitas pour harpe et *doudouk*.

Depuis 1989, A. Bakhtikian joue à l'étranger. On l'a notamment entendu, en tant que premier *doudouk*, dans la Troisième symphonie du compositeur Avet Terterian qui a été jouée en Russie, en Ukraine, en Hollande et en Allemagne. Aujourd'hui, Araïk est l'un des maîtres de la musique traditionnelle arménienne. En tant que soliste il se produit aussi bien avec des ensembles de musique traditionnelle qu'avec des orchestres symphoniques : London Symfonietta, Orchestre Symphonique de Saint-Pétersbourg, *etc*.

A. Bakhtikyan explore le répertoire sacré et folklorique arménien à partir des techniques d'improvisation héritées du Moyen-Âge, très différentes des méthodes orientales et européennes. Il essaye de faire redécouvrir à un public large cette musique du patrimoine arménien qui s'est développée à une époque culturellement riche, mais trop souvent oubliée. Au son de cet instrument musical, on peut notamment écouter des chants sacrés, écrits par des moines arméniens entre les 5e et 12e siècles, époque à laquelle les moines étaient des créateurs au sens le plus large : scientifiques, poètes, musiciens. Aujourd'hui, ces chants sont malheureusement peu connus du public.

Seul, dans la petite salle du théâtre de la *Rianderie* de Marcq en Barœul, il a interprété un répertoire encore différent : pièces de source iranienne, compositions, improvisations… Une partie de ces interprétations figure dans son dernier CD *Monodiques doudouk solo* que l'on pouvait se procurer après le concert. Une centaine de spectateurs ont rempli cette salle et beaucoup apprécié ce voyage en terre arménienne auquel il ne manquait que des images réelles. Seuls les Arméniens présents les avaient dans la tête.

Les dimanches de l'improvisation se poursuivent les dimanches 8 février et 22 mars. L'entrée est gratuite et

տիկյանը մոր հորդորներով սկսում է դուդուկ նվագել: Այսպիսով՝ 14 տարեկանից նա անբաժան է այս երաժշտական նվագարանից:

Տասնվեց տարեկանում պապն Արայիկին տանում է դուդուկի մեծ վարպետ Ջիվան Գասպարյանի մոտ, ով ապրում էր նույն թաղամասում: Ահա այս ժամանակվանից սկսած վերջինս դառնում է և մնում նրա միակ ուսուցիչը: 1982 թ. Ա. Բախտիկյանը ընդունվում է Երևանի պետական կոնսերվատորիա, որն ավարտում է 1987 թ.: Նույն տարում նա արժանանում է հայկական ազգային «Սայաթ-Նովա» մրցույթի առաջին մրցանակին՝ Կոմիտասի՝ տավիղի և դուդուկի համար պիեսի կատարումով:

1989 թ. սկսած Ա. Բախտիկյանը ելույթներ է ունենում արտասահմանում: Ռուսաստանում, Ուկրաինայում, Հոլանդիայում և Գերմանիայում, որպես դուդուկի մենակատար, նա բազմիցս ներկայացրել է երգահան Ավետ Տերտերյանի 3-րդ սիմֆոնիան: Այսօր Արայիկը հայկական ազգային երաժշտության հեղինակավոր անուններից: Որպես մենակատար նա ելույթ է ունենում ինչպես ազգային երաժշտական համույթների, այնպես էլ սիմֆոնիկ նվագախմբերի հետ. Լոնդոնի «Սիմֆոնիետա», Սանկտ-Պետերբուրգի սիմֆոնիկ նվագախումբ և այլն:



A. Bakhtikyan sur la scène du théâtre de la *Rianderie* de Marcq en Baroeul
Ա. Բախտիկյանը Մարք ան Բարոլի «Ռիանդրի» թատրոնի բեմի վրա

Միջնադարից եկած կատարողական տեխնիկայով, որը զգալիորեն տարբերվում է արևելյան և եվրոպական մեթոդներից, Ա. Բախտիկյանը հաջողությամբ մշակումներ է իրականացնում հայկական ազգային և եկեղեցական երաժշտացանկից: Նա հնարավորություն է ընձեռում հասարակական լայն զանգվածներին վերաբացահայտել հայկական ազգային մշակույթի մաս կազմող այս երաժըշտությունը, որը զարգացում է ապրել մշակութային առումով հարուստ, բայց հաճախ մոռացված մի ժամանակաշրջանում: Նրա երաժշտական նվագարանի միջոցով կարելի է մասնավորապես ունկնդրել եկեղեցական շարականներ, որոնք գրել են հայ վանականները 5-ից 12-րդ դարերի միջև ընկած ժամանակահատվածում: Նրանք բառիս ամենալայն իմաստով ստեղծագործողներ էին՝ գիտնականներ, բանաստեղծներ, երաժիշտներ: Այսօր, ցավոք սրտի, այս ժանրի երաժշտությունը լայն տարածում չունի հասարակության մեջ:

Մարք ան Բարոլի «Ռիանդրի» թատրոնի փոքրիկ դահլիճում Արայիկ Բախտիկյանը ներկայացրեց իր բազմազանությամբ մի յուրօրինակ երաժշտացանկ՝ պարսկական պիեսներ, կոմպոզիցիաներ, իմպրովիզացիաներ... Նրա կատարումների մի մասը տեղ են գտել երաժիշտի վերջին ձայնասկավառակում՝ «Մենանվագ. դուդուկի մեղեդիներ»), որը հնարավոր եղավ ձեռք բերել համերգից հետո: Դահլիճում ներկա էր մոտ հարյուր հանդիսատես: Նրանք բարձր գնահատեցին դեպի հայերի երկիր կատարած այս «ճամփորդությունը», որին պակասում էին միայն իրական պատկերները: Միայն համերգի հայ ունկնդիրները դրանք ունեին իրենց մտքերում:

Կատարողական արվեստի հաջորդ կիրակիները տեղի կունենան փետրվարի 2-ին և մարտի 23-ին: Մուտքն ազատ է, իսկ համերգների սկիզբը՝ ժամը 11.30: Եթե դուք ցանկություն ունեք բացա-

les concerts commencent à 11h30. Si vous avez envie de découvrir d'autres artistes, allez-y : 2, rue du Marquisat à Marcq en Barœul.

Après le concert et un échange avec son public et les organisateurs du spectacle, Monsieur Bakhtikian nous a fait l'honneur d'accepter de partager un barbecue traditionnel, avec quelques membres de l'association *Ararat* dans le jardin de Razmik Lmntsian. Par ce très bel après-midi d'au-tomne, les jardins familiaux ont alors résonné du son du *doudouk* d'Araïk.

Louisette Lamarche

EXPOSITION *ENCRAGE*

Pendant plus de deux ans, Jean-Jacques Tachdjian, artiste alter graphiste et fondateur de l'association *La chienne*, a installé une imprimerie offset à la Maison Folie de Wazemmes. Cet outil, mis également à la disposition d'autres artistes, a donné lieu à de nombreux travaux expérimentaux de reproduction d'œuvres et d'images. Il s'agissait de « *faire de l'offset d'hier une technique artistique de demain* ». Monsieur Tachdjian a également animé des ateliers de sensibilisation aux arts graphiques et à la communication pour des associations de quartier, des écoles et d'autres publics. Quelques-unes de leurs productions ont pu être exposées.

L'exposition *Encrage* a eu lieu du 11 octobre au 23 novembre 2008 pour relater ses années de travail et mettre en valeur l'« *usage des systèmes industriels, de la gravure à l'imprimerie* […] *à des fins artistiques et, parallèlement, étudier comment la sérigraphie s'immisce aujourd'hui régulièrement dans le marché de l'art* ».

Nous avons ainsi pu voir deux expositions parallèles réparties sur deux étages. Elles ont présenté de nombreuses affiches de concert de rock, des posters, des images proches de la bande dessinée, des slogans humoristiques… L'usage de la couleur est souvent intense et essentiel se déclinant subtilement d'une reproduction à l'autre, d'une erreur volontaire d'impression à l'autre afin que l'œuvre reste unique. Les auteurs représentés étaient nombreux et certains utilisent des pseudonymes. Au premier étage de l'exposition portant le nom d'*Impressions*

Couverture du livre : Jean-Jacques Tachdjian (Éd. Pyramyd / coll. Design&Designers 031) (120 p., préface de Renaud Faroux) + CD-Rom (Mac / PC) Infos: www.pyramyd-editions.com



հայտելու այլ երաժիշտների, ապա կարող եք գնալ հետևյալ հասցեով՝ 2, rue du Marquisat, Marcq en Barœul:

Համերգից հետո պարոն Բախտիկյանը ջերմ զրույց ունեցավ հանդիսատեսների ու միջոցառման կազմակերպիչների հետ, ապա մեծ սիրալիրությամբ ընդունեց մեր առաջարկը՝ ծանոթությունը շարունակել Ռազմիկ Լմնցյանի այգում՝ ավանդական խորովածի շուրջ: Այս միջոցառմանը ներկա եղան նաև «Արարատ» միության մի քանի անդամներ: Աշնանային այդ շատ հաճելի օրվա երկրորդ կեսին ընտանեկան այգիների տարածքում ևս հնչեցին Արայիկի դուդուկի մեղեդիները:

Լուիզեթ Լամարշ

ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Երկու տարուց ավելի ալտեր-գրաֆիստ արվեստի գործիչ և «Շունը» միության հիմնադիր Ժան-Ժակ Թաշջյանը Ուազեմ թաղամասի «Հրաշքների տանը» հիմնել է օֆսեթ տպարան, որ դրվել է նաև այլ արվեստագետների տրամադրության տակ և ծառայում է բազմաթիվ փորձարարական աշխատանքների և նկարների վերարտադրման համար: Նպատակն այն է, որ «անցյալի օֆսեթը դառնա ապագայի արտիստական տեխնիկա»: Պարոն Թաշջյանը ղեկավարել է նաև գրաֆիկական արվեստի ճանաչման և հաղորդակցման խմբակներ թաղամասի տարբեր միությունների, դպրոցների և այլոց համար: Նրանց կատարած որոշ աշխատանքներ տեղ են գտել այս ցուցահանդեսում:

Գրաֆիկական ցուցահանդեսը գործել է 2008 թ. հոկտեմբերի 11-ից մինչև նոյեմբերի 23-ը: Նրա նպատակն էր պատմել այդ տարիների կատարած աշխատանքի մասին, ինչպես նաև արդիականացնել «արդյունաբերական համակարգերի, տպագրական գրավյուրայի […] օգտագործումը գեղարվեստական նպատակներով և զուգահեռաբար ուսումնասիրել, թե ինչպես է սերիգրաֆիկան այսօր պարբերաբար իրեն զգալ տալիս արվեստի շուկայում»:

Այսպիսով մենք հնարավորություն ունեցանք տեսնելու երկու զուգահեռ ցուցահանդեսներ, որոնք ներկայացված էին առաջին և երկրորդ հարկերում: Դրանք բաղկացած էին ռոք համերգների բազմաթիվ հայտագրերից ու պլակատներից, ամսագրերի նկարների քաղվածքներից, կոմիկսներ հիշեցնող նկարներից, հումորիստական կարգախոսներից... Գույների օգտագործումը հաճախ ինտենսիվ էր և առանցքային, նրանք նրբորեն միախառնվում էին մի աշխատանքից մյուսը, դիտավորությամբ արված մի տպագրական սխալից մյուսը՝ ամեն մի գործ դարձնելով յուրօրինակ: Ցուցադրված էին նկարիչների բազմաթիվ աշխատանքներ: Հեղինակների մի մասը ներկայացված էր ծածկանուններով: Երկրորդ հարկում ցուցադրվող էքսպոզիցիայում, որը կրում էր «Ազատ տպագրություն» խորագիրը, գտնվում էին Ժան-Ժակ Թաշջյանի (Էլ Ռոթրինգո ծած-

Les œuvres graphiques de Jean-Jacques Tachdjian dit El Rotringo
Ժան-Ժակ Թաշջյանի՝ Էլ Ռոթրինգո, գրաֆիկական գործերը

sauvages on a trouvé un triptyque d'œuvres de Jean-Jacques Tachdjian dit El Rotringo. Ces trois œuvres sont marquantes par leur couleur unique qui met en valeur le graphisme utilisé.

Jean-Jacques Tachdjian est lillois. Nous essayerons de le rencontrer pour faire sa connaissance et s'il le souhaite parler d'arménité et vous le relater. À suivre…

Louisette Lamarche

CONFÉRENCE SUR L'ARMÉNIE

Le 9 décembre dernier, l'association « Tourcoing Loisirs Séniors » (TLS) a invité l'archéologue Jérémie Liagre pour une conférence sur l'Arménie. L'association *Ararat* ne pouvait rater ce rendez-vous et a été très bien accueillie par les responsables de l'association TLS.

Jérémie Liagre, venant de Lyon, participe depuis plusieurs années à des campagnes de fouilles organisées en Arménie par le Ministère français des Affaires Étrangères (« Mission Caucase » dirigée par Christine Chataigner) et le Centre National de Recherches Scientifiques (CNRS) en lien avec des archéologues arméniens dont Monsieur Boris Gasparyan (Institut d'archéologie d'Erevan).

Après une brève présentation historique et géographique du pays, J. Liagre a insisté sur l'importance du phénomène volcanique qui a donné une nature de sol très particulière, avec beaucoup de stratigraphie, très importante pour la conservation des sites, des occupations, de l'habitat, des hommes de la préhistoire.

En effet, l'obsidienne (ongle du diable), tellement présente en Arménie, était aussi précieuse que l'or pendant la préhistoire. Elle servait à fabriquer des outils coupant de grande valeur, comme des pointes de flèche ou de longues lames, qui s'exportaient jusqu'au Proche-Orient.

J. Liagre a reprécisé quelques dates importantes de la préhistoire : les premiers hommes européens sont apparus il y a 1,8 million d'année (Géorgie) ; le feu a été maîtrisé il y a 750 000 ans (Proche-Orient) ; les premières sépultures datent d'environ 100 000 ans (Irak).

L'intérêt des missions archéologiques du CNRS dans le Caucase date d'une dizaine d'années avec en 1999 la découverte à Dmanissi (Géorgie) des restes d'un *homo erectus* datant de 1,8 million d'année. Il a été appelé *homo georgicus*. Il s'agit là des plus anciens restes humains trouvés en Europe jusqu'à présent.

À la suite de cette découverte, de nombreuses fouilles ont eu lieu dans le Nord de l'Arménie. Beaucoup d'outils ont été trouvés, mais pas de traces de l'homme. D'autres outils datant du paléolithique moyen ont été trouvés dans la vallée du Vorotan, proche de l'Iran, à plus de 1800 mètres d'altitude (l'un des sites les plus hauts du monde). D'autres similaires ont été trouvés en Azerbaïdjan. L'ensemble des pièces trouvées sur ces sites a été qualifié d'éléments constitutifs de l'une des premières cultures du Petit Caucase.

http://www.arminfo.info

կանվամբ), աշխատանքներից երեքը: Նրանցում գերիշխում է մեկ գույնը, որն առավելագույնս արժևորում է օգտագործած գրաֆիզմը:

Ժան-Ժակ Թաշճյանը լիլաբնակ է: Մենք կփորձենք ծանոթանալու նպատակով նրա հետ հանդիպել և զրուցել, եթե նա ցանկանա, հայկականության մասին և այդ ամենը Ձեզ փոխանցել: Շարունակելի...

Լուիզեթ Լամարշ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

2008 թ. դեկտեմբերի 9-ին «Թուրքուեն քաղաքի մեծահասակների ժամանց» միությունը հրավիրել էր լիոնաբնակ հնագետ Ժերեմի Լիագրին՝ Հայաստանի մասին դասախոսություն կարդալու: «Արարատ» միությունը չէր կարող բաց թողնել այս հանդիպումը, ինչը և արժանացավ միջոցառման կազմակերպիչների շատ լավ ընդունելությանը:

La carte de certains sites archéologiques de l'Arménie
Հայաստանի որոշ հնագիտական բնակատեղիների քարտեզ

Ժերեմի Լիագրը մի քանի տարի է, ինչ պարոն Բորիս Գասպարյանի (Երևանի հնագիտության ինստիտուտ) և ուրիշ հայ գործընկերների հետ Հայաստանում մասնակցում է Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարության («Գործուղում Կովկաս», ղեկավար՝ Քրիստին Շատենյե) և Գիտական Հետազոտությունների Ազգային Կենտրոնի (ԳՀԱԿ) կազմակերպած աշխատանքներին:

Հայաստանի պատմությունն ու աշխարհագրությունը համառոտ ներկայացնելուց հետո օրիորդ Լիագրը հատուկ ընդգծեց հրաբխային գործոնի կարևորությունը, որի հետևանքով ձևավորվել է երկրի հողային յուրահատուկ շերտն ու ռելիեֆը, ինչը մեծ նշանակություն է ունեցել նախնադարյան մարդու բնակավայրերի ու բնակատեղիների պահպանման գործում:

Իսկապես, օբսիդիանը (սատանի եղունգ), որի պաշարները Հայաստանում մեծ են, հնագույն ժամանակներում ոսկու նման թանկարժեք էր և ծառայում էր շատ արժեքավոր կտրող գործիքների պատրաստմանը, ինչպիսին են, օրինակ՝ նետերի սայրերը կամ երկար շեղբերը, որոնք արտահանվում էին մինչև Մերձավոր Արևելքի երկրներ:

Ժերեմի Լիագրը վերարտադրեց նախապատմական մի քանի իրադարձությունների ժամանակագրությունները. առաջին եվրոպացի մարդու հայտնությունը 1,8 միլիոն տարի առաջ (Վրաստան), կրակի յուրացումը՝ 750 000 տարի առաջ (Մերձավոր Արևելք), առաջին գերեզմանները՝ մոտ 100 000 տարի առաջ (Իրաք):

ԳՀԱԿ-ի հետաքրքրությունը Կովկասի նկատմամբ առաջացավ մոտ 10 տարի առաջ, երբ 1999 թ. Դմանիսիում (Վրաստան) հայտնաբերվեցին հոմո էրեկտուսի մնացորդներ, որոնց տարիքը հասնում էր 1,8 միլիոն տարվա: Այն կոչվեց հոմո ժեորժիկուս: Խոս-

Lors de la construction d'une route à Kalavan, un très beau site de fouille, datant de 15 000 ans avant Jésus Christ environ, a été découvert. Il fait l'objet de fouilles depuis 4 ans. C'est un site de chasseurs-cueilleurs. On y a retrouvé des empierrements, des foyers, des ossements d'animaux, des outils et des pointes de flèches taillés dans

Aperçu général du site Zorakar, près de Sisian
Զորաց քարերի ընդհանուր տեսքը՝ Սիսիանի մոտակայքում

une très grande variété de pierres : jaspe, obsidienne, cristal de roche… et de très rares silex comme plus à l'Ouest de l'Europe. Certains types d'obsidiennes viennent probablement d'Ossétie à de nombreux jours de marche de là. Le même type d'éléments ont été relevés dans le sud de la Russie. L'Arménie se révèle donc être un lieu d'approvisionnement en matières premières et un point central d'innovation et de culture.

C'est un lieu de communication entre le Proche-Orient et l'Europe par lequel les premiers hommes sont passés du continent africain au continent européen. Cela semble également avoir été une impasse pour les hommes de Néandertal qui ont précédé les *homos sapiens*. En effet, des traces de Néandertaliens ont été trouvées dans le Petit Caucase. Elles datent d'une époque contemporaine à celle des *homos sapiens* et montrent qu'ils ont survécu sur ce territoire plus longtemps qu'ailleurs.

Lors de la période du néolithique (9 000 ans avant notre ère), les hommes se sédentarisent. On voit apparaître les maisons et l'agriculture. Le berceau de cette révolution est au Proche-Orient, les restes des premières maisons ont été trouvés en Mésopotamie. Puis cette culture est remontée en Europe soit par le territoire de l'actuelle Turquie soit par le couloir caucasien.

Sur le site de Kmlo (vallée de Qasakh), au centre de l'Arménie, des outils similaires à ceux du Proche-Orient de l'époque ont été trouvés prouvant que le couloir caucasien a bien permis le passage de ces hommes vers l'Europe.

À l'époque suivante, l'usage du métal apparaît. Là encore, l'Arménie est le point central de développement des communautés qui savent travailler les métaux dont le cuivre.

Dans les couches supérieures du site de Kalavan, des sépultures ont été découvertes avec des vases à offrandes, des bijoux en or, *etc*. Apparaît alors une culture par-ticulière du couloir de l'Araxe qui vient des steppes d'Asie Centrale. L'Arménie est donc un pays à la croisée des chemins.

À Geghamasar, des peintures rupestres ont été trouvées dans une grotte. Certaines sont à plus de six mètres de hauteur et les signes se retrouvent sur une largeur de huit mètres. Certaines scènes de chasse sont très proches de peintures trouvées à Valcomania en Italie. On s'interroge sur cette ressemblance, s'agit-il de populations

քը մինչև այժմ Եվրոպայում հայտնաբերված ամենահին մարդու մնացորդների մասին է:

Այս հայտնագործությունից հետո Հայաստանի հյուսիսում կատարվեցին բազմաթիվ պեղումներ: Գտնվեցին շատ գործիքներ, բայց մարդկային հետքեր՝ ոչ: Պալեոլիթի շրջանի ուրիշ այլ գործիքներ հայտնաբերվեցին Իրանին սահմանամերձ Որոտանի կիրճում՝ ծովի մակերևույթից 1800 մ բարձրության վրա. սա աշխարհի ամենաբարձրադիր բնակատեղիներից է: Նմանատիպ գործիքներ հայտնաբերվել են նաև Ադրբեջանում: Այս վայրերում գտնված առարկաներն ու իրերը Փոքր Կովկասի ամենաառաջին մշակույթների նմուշներից են:

Կալավանի մոտակայքում ճանապարհաշինարարական աշխատանքների ընթացքում հայտնաբերվեց պեղումների մի գեղեցիկ վայր, որը թվագրվում է մ.թ. մոտ 15 000 տարի առաջ: Արդեն 4 տարի է, ինչ պեղումները շարունակվում են: Սա եղել է որսորդ-հավաքողների բնակավայր: Այստեղ գտնվել են քարե շինություններ, բնակատեղիներ, գործիքներ, սրաասայրեր՝ պատրաստված տարբեր տեսակի քարերից. հասպիս, օբսիդիան, լեռնային բյուրեղ… և հազվադեպ հանդիպող կայծքար, որն առավելապես տարածված է Արևմտյան Եվրոպայում: Օբսիդիանի որոշ տեսակներ հավանաբար բերվել են Օսեթիայից, որտեղից ոտքով Հայաստան կարելի էր հասնել բազմաթիվ օրերի ընթացքում: Նույնատիպ նյութեր պեղվել են նաև Ռուսաստանի հարավում: Պարզ է դառնում, որ Հայաստանը հումքի ձեռքբերման, նորամուծությունների և մշակույթների խոշոր կենտրոն է եղել:

Հայաստանը հաղորդակցության վայր էր Մերձավոր Արևելքի և Եվրոպայի միջև, որտեղից առաջին մարդիկ աֆրիկյան մայրցամաքից տեղափոխվել են դեպի Եվրոպա: Սա կարող էր նաև փակուղի դառնալ նեանդերթալյան մարդու համար, որը նախորդել է հոմո սապիենսին: Եվ իրոք, Փոքր Կովկասում գտնվել են նեանդերթալյան մարդու հետքեր: Դրանք թվագրվում են հոմո սապիենսի ապրած ժամանակաշրջանով և ցույց են տալիս, որ նրանք այստեղ ապրել են ավելի երկար, քան որևէ այլ վայրում:

Les trous taillés dans les pierres de Zorakar/ Զորաց քարերի ձեռակերտ անցքերը

Նեոլիթի շրջանում (մ.թ. մոտ 9 000 տարի առաջ) մարդը սկսում է նստակյաց կյանք վարել: Երևան են գալիս բնակատեղիներ և գյուղատնտեսությունը: Այս վերափոխման բնօրրանը Մերձավոր Արևելքն էր, առաջին բնակատեղիների հետքերը գտնվել են Միջագետքում: Հետագայում այս մշակույթը տեղափոխվեց Եվրոպա՝ կա՛մ ժամանակակից Թուրքիայի տարածքով, կա՛մ կովկասյան միջանցքով:

Հայաստանի կենտրոնում գտնվող Կմլո վայրում (Քասախի կիրճ) հայտնաբերվել են նույնանման և միևնույն ժամանակաշրջանի գործիքներ, որոնք պեղվել են նաև Մերձավոր Արևելքում. սա ապացուցում է, որ կովկասյան միջանցքը ծառայել է այս մարդկանց

qui se sont déplacées ou qui ont échangé ?

Environ 200 pierres ont été dressées sur le site de Zorakar (district de Sisian). Elles se distinguent par les trous taillés dans chacun de ces pierres qui donnent lieu à de nombreuses interprétations quant à leur usage.

Aperçu général du site Zorakar, près de Sisian
Զորաց քարերի ընդհանուր տեսքը՝ Սիսիանի մոտակայքում

Dans la plaine de l'Ararat, il existe de nombreuses tombes anciennes et riches de vestiges. Les « *kourgans* » (nom issu du russe) sont des cercles de pierres de 5 à 6 mètres de diamètre construits autour d'une tombe.

La République d'Arménie a inscrit le site de Gorak à la Réserve Archéologique classée, d'environ 200 hectares, où il est interdit de construire. C'est un site de tuf très riche. Il comporte des bassins, des pressoirs à raisin, des amphores, des tombes, des niches, des escaliers, des hôtels à sacrifice, des céramiques, des statuettes… Le paysage est à lui seul un monument. Le site date de 29 000 ans avant notre ère et les vestiges s'étalent de la période de l'âge de bronze à la période actuelle. C'est un territoire encore habité aujourd'hui.

Si vous passez à proximité de l'un de ces sites lors d'un voyage en Arménie, n'hésitez pas à le visiter. Hormis le site de Sisian, il est prudent de téléphoner au préalable à l'Institut d'archéologie d'Erevan. La demande d'un guide peut également rendre votre visite plus instructive. En été, vous croiserez peut être Jérémie Liagre ou d'autres Français sur l'un de ces sites.

À l'issue de la conférence, le public composé de plus de 100 personnes a posé de nombreuses questions sur l'économie, les moyens pour se rendre en Arménie, le régime politique, les liens avec la Turquie, *etc*., révélant de la curiosité pour ce pays si méconnu.

Louisette Lamarche

UNE NOUVELLE RENCONTRE BELGIQUE-ARMÉNIE

Bruxelles, le 11 octobre 2008, le stade du Roi Baudouin. Comme l'année dernière, l'équipe d'Arménie est venue à Bruxelles et a mesuré ses forces avec l'équipe belge.

Malgré la défaite 3:0 de l'année précédente, à nouveau, les amateurs de football arméniens de Lille sont allés voir ce match avec beaucoup d'enthousiasme en espérant que cette fois l'équipe d'Arménie serait mieux préparée et qu'ils rentreraient chez eux avec la victoire. Cependant, le nombre de spectateurs lillois était quand même en baisse par rapport à l'année précédente : certains ne croyant pas en la victoire n'ont pas fait le déplacement.

Եվրոպա անցնելու համար:

Հաջորդը մետաղի օգտագործման դարաշրջանն էր: Այստեղ ևս Հայաստանը կենտրոնական դեր խաղաց այն մարդկանց խմբերի զարգացման կյանքում, որոնք կարողանում էին աշխատել մետաղի՝ այդ թվում պղնձի հետ:

Կալավան վայրի արտաքին շերտերում գտնված գերեզմանատեղիներից հայտնաբերել են զոհաբերության սափորներ, ոսկյա զարդեր և այլն: Այսպիսով, Արաքսի դարավանդում միջանցք է հանդիսացել Կենտրոնական Ասիայի տափաստաններից եկած առանձնահատուկ մի մշակույթի: Այս ամենն ապացուցում է, որ Հայաստանը երկիր է, ուր հատվել են շատ ճանապարհներ:

Գեղամասարի քարանձավներից մեկում հայտնաբերվել են ժայռապատկերներ: Սրանցից մի քանիսի չափերը հասնում են մինչև վեց մետր բարձրության և ութ մետր լայնության: Որսի որոշ տեսարաններ նման են Վալկոմանիայում (Իտալիա) գտնված ժայռապատկերներին: Այսպիսի նմանությունը կապվա՞ծ է, արդյոք, բնակչության տեղափոխման կամ փոխանակման հետ. սա դեռ հարցականի տակ է:

Մոտ երկու հարյուր քար կանգնեցվել են Զորաց քարեր վայրում (Սիսիանի շրջան): Սրանք իրարից տարբերվում են յուրաքանչյուր քարի վրա արված ձեռակերտ անցքերով, որոնց օգտագործման մասին կարծիքները նույնպես տարբեր են:

Արարատյան դաշտում կան բազմաթիվ հին գերեզմանատեղիներ (ռուս.՝ կուրգաններ), որոնք հարուստ են հնագիտական նշանակություն ունեցող հետքերով: Կուրգանը 5-6 մ տրամագիծ ունեցող քարերի մի օղակ է՝ կառուցած մի գերեզմանի շուրջը:

Հայաստանի Հանրապետության մոտ 200 հեկտար տարածք ունեցող Գորակ բնակատեղին դասվել է պահպանվող հնագիտական արգելավայրերի շարքը: Տեղանքը հարուստ է տուֆով: Այստեղ կան լողավազաններ, խաղողի հնձաններ, սրվակներ, գերեզմաններ, խցեր, աստիճաններ, զոհասեղաններ, խեցեգործական իրեր, արձանիկներ և այլն: Բնապատկերն ինքնին մի հուշարձան է: Վայրը թվագրվում է մ.թ. 29 000 տարի առաջ, իսկ հնագիտական մնացորդները տարածվում են բրոնզե դարից մինչև մեր օրերը: Այսօր էլ այս տարածքը բնակելի է:

Հայաստան կատարած ճամփորդության ժամանակ, եթե դուք անցնելիս լինեք նշված բնակավայրերի մոտով, ապա մի՛ վարանեք այցելել այդ վայրերը: Բացի Սիսիանի շրջանի բնակատեղիից, մենք ձեզ խորհուրդ կտանք նախօրոք զանգահարել Երևանի հնագիտության ինստիտուտ: Էքսկուրսավարի ներկայությունը ձեր այցը կդարձնի ավելի ճանաչողական: Ամռանը հիշատակված վայրերից որևէ մեկում հնարավոր է, որ դուք հանդիպեք Ժերեմի Լիագրին կամ մեկ ուրիշ ֆրանսիացու:

Դասախոսության ավարտից հետո ներկաները, որոնց թիվն անցնում էր 100-ից, բազմաթիվ հարցեր տվեցին՝ կապված Հայաստանի տնտեսության, այդ երկիր գնալու տարբերակների, քաղաքական վարչակարգի, Թուրքիայի հետ հարաբերությունների մասին և այլն: Այս ամենը փաստում էր այն հետաքրքրության մասին, որ կա այս անծանոթ երկրի նկատմամբ:

Լուիզեթ Լամարշ

ԲԵԼԳԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Բրյուսել, 11 հոկտեմբերի 2008 թ., Թագավոր Բոդուենի անվ. մարզադաշտ. ինչպես անցյալ տարի, Հայաստանի հավաքականը ժամանեց Բրյուսել և փորձեց իր ուժերը Բելգիայի հավաքականի հետ խաղում:

Չնայած նախորդ տարվա 3:0 հաշվով կրած պարտությանը, այս անգամ էլ լիլահայ ֆուտբոլասերները մեծ ոգևորվածությամբ գնացին խաղը դիտելու՝ հույս ունենալով, որ Հայաստանի հավաքականն այս տարի ավելի լավ պատրաստված կլինի, և Լիլ կվերադառնան հաղթական տրամադրությամբ: Սակայն, հարկ է նշել, որ Լիլից ժամանած մարզասերների թիվն այս անգամ զգալիորեն նվազել էր: Դա բացատրվում էր նրանով, որ ոչ բոլորն էին լավատե-

Notons également que plus d'une dizaine de fans lillois de football arménien, en retard, n'ont pu entrer dans le stade pour voir le match. De surcroît, le prix des places avait sensiblement augmenté par rapport à la rencontre de 2007.



Un épisode du match Belgique-Arménie
Տեսարան Բելգիա-Հայաստան ֆուտբոլային հանդիպումից

Le premier but des footballeurs belges a eu un impact important sur l'issue du match. Il a marqué le début de la domination des Belges. Pendant la première mi-temps, l'équipe d'Arménie a pris un second but. Il est issu de deux erreurs simples.

Pendant la deuxième mi-temps, les joueurs arméniens se sont mieux organisés et ont tout tenté pour rééquilibrer le score. Mais, malheureusement, ils n'y sont pas parvenus et celui-ci est resté inchangé : 2:0. Le manque de vigilance de notre équipe a été la cause de sa défaite.

Karen et Kristina Zakarian

սորեն տրամադրված խաղի հաղթական արդյունքի նկատմամբ: Նշենք նաև, որ մեկ տասնյակից ավելի լիլահայ ֆուտբոլի երկրպագու էլ ուշացման պատճառով հնարավորություն չունեցավ մարզադաշտ մուտք գործել և դիտել խաղը: Բացի դրանից, տոմսերի գինը 2007 թ. հանդիպման հետ համեմատած զգալիորեն բարձրացել էր:

Հանդիպման ընդհանուր ելքի վրա մեծ ազդեցություն ունեցավ Բելգիայի ֆուտբոլիստների խփած առաջին գոլը, որից հետո նրանց առավելությունը դարձավ ակնհայտ: Առաջին խաղակեսի ընթացքում Հայաստանի հավաքականը երկու գնդակ ընդունեց իր դարպասը: Դա թույլ տված երկու պարզագույն սխալների արդյունքն էր:

Les supporters arméniens de Lille à Bruxelles avant le match de football
Լիլահայ ֆուտբոլասերները Բրյուսելում՝ ֆուտբոլային հանդիպումից առաջ

Երկրորդ խաղակեսում հայ ֆուտբոլիստներն ավելի կազմակերպված էին խաղում՝ աշխատելով ամեն ինչ անել հաշիվը վերականգնելու համար: Բայց, ցավոք, դա նրանց չհաջողվեց, և խաղն ավարտվեց 2:0 հաշվով: Հայաստանի հավաքականի համար զգոնության պակասը խանգարիչ հանգամանք հանդիսացավ հաջող հանդես գալու:

Կարեն և Քրիստինա Զաքարյաններ

NOTRE INVITÉE

En prenant connaissance des programmes des concerts de l'Orchestre National de Lille, j'ai été agréablement surprise de découvrir le nom de la violoniste Delphine Der-Avedisyan. Fille de cette « famille musicale » internationalement connue, elle a accepté avec plaisir de nous accorder une interview pour être présentée à la communauté arménienne de Lille.

Le rêve de mamie Suzanne s'est réalisé quand elle a vu Delphine, sa petite-fille cadette, parmi ces musiciens de qualité. Mais avant cela….

« *J'ai eu une enfance douloureuse, très douloureuse, ou pratiquement je n'ai presque pas eu d'enfance* », raconte Delphine. « *Pouvez-vous imaginer une fillette qui devait échanger ses poupées et autres jouets contre un violon et ne penser qu'avec nostalgie aux jeux d'enfants. Ma grand-mère qui était une femme autoritaire avec un caractère très stricte, m'enfermait dans une pièce et me forçait à jouer pendant des heures. À mes protestations, elle répondait toujours : « Tu comprendras ensuite qu'une profession est un bracelet en or et que le métier de musicien est très valorisant, il enrichit l'âme et renforce la sincérité de l'homme ». Aujourd'hui, je suis reconnaissante à mamie Suzanne qui a été non seulement ma première éducatrice mais m'a également accompagnée toute ma vie* ».

De génération en génération, la musique et l'art ont été vénérés dans la famille de Delphine. Sa grand-mère, sa mère et sa sœur avaient un don vocal parfait. Outre cela, la mère de Delphine, Madame Marie, maîtrisait parfaitement la danse classique. Elle excellait également dans la peinture. La sœur de Delphine a eu une formation musicale, mais c'est Delphine et sa tante, Juliette Klmazian, qui sont devenues musiciennes profession-

ՀՅՈՒՐԱՍՐԱՀ

Լիլի ազգային սիմֆոնիկ նվագախմբի համերգային ծրագրերին ծանոթանալիս հաճելի անակնկալի հանդիպեցի՝ կարդալով ջութակահարուհի Դելֆին Դեր-Ավեդիսյանի անունը: Միջազգային մեծ համբավ վայելող երաժշտական այս ընտանիքի հայ դուստրը՝ Դելֆինը, սիրով համաձայնեց զրուցել և ներկայանալ Լիլի հայ համայն-քին:

Սյուզան մամիկի երազանքն իրականացավ, երբ կրտսեր թոռնուհուն՝ Դելֆինին, տեսավ բարձրակարգ երաժիշտների շարքում: Իսկ մինչ այդ...

– Ծանր, շատ ծանր մանկություն եմ ունեցել, կամ գրեթե մանկություն չեմ ունեցել,– պատմում է Դելֆինը: – Պատկերացնու՞մ եք մի փոքրիկ աղջնակի, որն իր տիկնիկները և մյուս խաղալիքները պիտի փոխարիներ ջութակով և մանկական խաղերի մասին միայն կարոտով մտածեր: Մեծ մայրս, որ բնավորությամբ շատ խիստ և կամային տիկին էր, ինձ փակում էր սենյակում և ժամեր շարունակ ստիպում նվագել: Իմ ընդվզումներին նա միշտ պատասխանում էր. «Հետո կհասկանաս, որ մասնագիտությունը ոսկե ապարանջան է, իսկ երաժշտի մասնագիտությունը՝ շատ վսեմ, հոգին հարստացնող, մարդուն ազնվացնող մասնագիտություն է»: Հիմա երախտապարտ եմ Սյուզան մամիկիս, որը եղավ ոչ միայն իմ առաջին դաստիարակն ու ուսուցիչը, այլև մնաց իմ կյանքի մշտական ուղեկիցը:

Երաժշտությունն ու արվեստը Դելֆինենց գերդաստանում սերնդեսերունդ փոխանցվող երկրպագություն է: Վոկալ հիանալի տվյալներ ունեին տատիկը, մայրը, քույրը: Դելֆինի մայրը՝ տիկին Մարին, նաև հրաշալի տիրապետում էր դասական պարին, իրեն գերազանց դրսևորում նկարչության ասպարեզում: Երաժշտական կրթություն ստացավ նաև Դելֆինի քույրը, բայց պրոֆեսիոնալ երաժիշտներ դարձան միայն Դելֆինը և մորաքույրը՝ Ջուլիետ Կըլմազյանը: Վերջինս ճանաչված դաշնակահարուհի է Մարսելում, իսկ ամուսինը՝ Խաչիկ Կըլմազյանը, Մարսելի «Պրադոյի» երգչա-

nelles. Cette dernière est une pianiste connue à Marseille et son mari, Khatchik Klmazian, dirige le chœur du *Prado* et celui de la chorale arménienne d'enfants *Garoun*.

Delphine a surmonté toutes les difficultés de la vie seule. Une fois le conservatoire de Valence terminé à 13 ans, elle part pour Paris où elle fait ses études à l'école musicale de Boulogne-Billancourt. Ensuite, elle est entrée au Conservatoire National Supérieur de Musique de Paris (CNSMP). Nouvellement promue, elle commence à travailler dans l'Orchestre symphonique de Metz. Quatre ans plus tard, pour des raisons familiales, elle rejoint l'Orchestre Symphonique du Luxembourg. Puis, il y six ans, elle a brillamment remporté le concourt d'entrée à l'Orchestre National de Lille et jusqu'à aujourd'hui elle appartient à cette grande formation.

La jeune violoniste est très attachée à son métier. Quand elle parle de l'orchestre, elle exprime sa passion et sa sympathie envers ce collectif : « *D'abord mes filles et mon violon, après le reste* », dit-elle. Elle n'a pas eu la ténacité de sa grand-mère pour imposer à ses deux adolescentes, Marie et Pauline, de se familiariser avec le violon. La mère a laissé à ses filles l'opportunité de choisir leur activité préférée. Ainsi, elles ont préféré la danse et le sport.

Delphine avec le violon, son inséparable instrument
Դելֆինն իր անբաժան նվագարանի՝ ջութակի հետ

Dans la famille Der-Avedisyan, venue d'Istanbul à Valence il y a prés de 40 ans, c'est la culture arménienne qui prépondérait : ce n'est pas par hasard que Delphine a fait ses études à l'école arménienne locale. Elle s'exprime parfaitement dans la langue de ses ancêtres et ses centres d'intérêt pour ces racines s'élargissent de jour en jour.

« *J'aurais aimé que mes filles reçoivent l'éducation d'une nounou arménienne, mais je n'en ai pas eu l'occasion* », raconte Delphine. « *Mais, aujourd'hui, je suis heureuse d'apprendre qu'il existe des cours d'arménien à Lille auxquels j'ai l'intention d'inscrire mes filles Pauline et Marie de 12 et 14 ans* ».

À ce propos, lors de notre interview, le même intérêt à été exprimé par le sympathique compagnon de Delphine, Vincent, qui est Français et qui souhaite aussi apprendre l'arménien.

Delphine s'est réjouie de l'existence d'une association arménienne à Lille. « *Je pensais qu'ici les Arméniens étaient peu nombreux et avaient peu de chance de s'unir. C'est magnifique qu'un si petit nombre se soit réuni autour d'Ararat en conservant nos traditions nationales, nos fêtes et nos coutumes. Je pense que désormais je vais savourer la possibilité d'entrer en contact avec mes compatriotes. Cet été, avec mes enfants, je vais également réaliser notre rêve de visiter l'Arménie* ».

Jacqueline Kasparian

խմբի գլխավոր նվագավարն է և միաժամանակ ղեկավարում է «Գարուն» հայկական մանկական երգչախումբը:

Delphine Der-Avedisyan et l'Orchestre National de Lille
Դելֆին Դեր-Ավեդիսյանը և Լիլի Ազգային նվագախումբը

Կյանքի բոլոր դժվարությունները Դելֆինը հաղթահարել է ինքնուրույն, միայնակ: Տասներեք տարեկանում ավարտելով Վալանսի կոնսերվատորիան՝ մեկնել է Փարիզ, երկու տարի սովորել Բուլոնյը-Բիանքուրի երաժշտանոցում, իսկ այնուհետև ընդունվել Փարիզի բարձրագույն կոնսերվատորիան (CNSMP): Նորավարտ ջութակահարուհին իր աշխատանքային մկրտությունը ստանում է Մեցի սիմֆոնիկ նվագախմբում, իսկ չորս տարի անց՝ ընտանեկան հանգամանքների բերումով, տեղափոխվում է Լյուքսեմբուրգի սիմֆոնիկ նվագախումբ: Վեց տարի առաջ նա փայլուն հաղթանակ տարավ Լիլի սիմֆոնիկի հայտարարած մրցույթում և այսօր համալրում է նվագախմբի բազմամարդ կոլեկտիվը:

Երիտասարդ ջութակահարուհին անչափ նվիրված է իր մասնագիտությանը: Նվագախմբի մասին խոսելիս զգում ես նրա սերն ու համակրանքը կոլեկտիվի հանդեպ: «Առաջինը աղջիկներս և ջութակս, հետո՝ մնացյալը»,- ասում է նա: Տատիկի համառությունը չունեցավ, որ իր երկու դեռահաս աղջիկներին՝ Մարիին և Պոլինին ստիպեր ընկերանալ ջութակին: Հաճելի զբաղմունք ընտրելու հնարավորությունը մայրը ընձեռել է աղջիկներին, որոնք էլ նախընտրել են պարը և սպորտը:

Շուրջ 40 տարի առաջ Ստամբուլից Վալանսում հաստատված Դեր-Ավեդիսյանների ընտանիքում գերիշխողը հայկական մթնոլորտն էր: Եվ պատահական չէ, որ Դելֆինը սովորել է տեղի հայկական դպրոցում, հիանալի արտահայտվում է իր նախնիների լեզվով և օրավուր աճում է նրա հետաքրքրությունների շրջանակը իր հայկական արմատների նկատմամբ:

– Շատ կփափագեի, որ աղջիկներս հայ դայակի դաստիարակություն ստանային, բայց չհաջողվեց,- պատմում է Դելֆինը: - Սակայն այսօր շատ ուրախ եմ՝ տեղեկանալով, որ Լիլում գործում է հայկական դպրոց, ուր անկասկած կհաճախեն իմ 12-ամյա Պոլին և 14-ամյա Մարի դուստրերը:

Ի դեպ, մեր զրույցի ժամանակ նույն պատրաստակամությունը հայտնեց նաև Դելֆինի շատ հաճելի կողակիցը՝ Վենսանը, որն ազգությամբ ֆրանսիացի է և ուզում է սովորել նաև հայերեն:

– Ինձ համար շատ ուրախալի էր տեղեկանալ, որ Լիլում գործում է հայկական համայնքային կազմակերպություն,- շարունակում է Դելֆինը: Կարծում էի, որ այստեղ հայերը փոքրաթիվ են և մեկտեղվելու հնարավորությունը նույնպես փոքր է: Սակայն հրաշալի է, որ նույնիսկ այդ փոքրաթիվ մարդիկ համախմբվել են «Արարատ»ի շուրջ՝ պահպանելով մեր ազգային ավանդույթները, տոները, սովորությունները: Կարծում եմ, որ այսուհետև պիտի վայելեմ իմ հայրենակիցների հետ վերստին շփվելու հնարավորությունը, իսկ այս ամառ զավակներիս հետ պիտի իրականացնեմ նաև Հայաստան մեկնելու բաղձանքս:

Ժակլին Կասպարյան

orchestre national de lille
jean-claude casadesus
région nord/pas-de-calais
http://www.onlille.com

ASSEMBLÉES GÉNÉRALES 2008 DE L'ASSOCIATION *ARARAT*

Le 4 octobre dernier, l'association *Ararat* s'est réunie en assemblée générale ordinaire pour faire le bilan de l'année précédente.

Le bilan d'activité a récapitulé les évènements dont vous avez pu prendre connaissance au travers de la gazette *Ma-Sis* de l'association :

L'Assemblée générale de l'association *Ararat*, le 4 octobre 2008
«Արարատ» միության ընդհանուր ժողովը, 4 հոկտեմբերի 2008 թ.

1) Redémarrage de l'association à partir de l'activité de danse portée par le Centre social chaque samedi et du projet d'aller à la rencontre de *Yeraz* (à partir de mars 2008, interventions de Madame Galstian, chorégraphe de cette troupe et de l'école de danse de la région parisienne) ;
2) Cours d'arménien pour les enfants chaque samedi ;
3) Permanences parallèles de l'association chaque samedi ;
4) Cinq numéros de la gazette de l'association *Ma-Sis* ;
5) Deux déplacements :
   – novembre 2007, pour voir le spectacle de *Yeraz* à Maisons-Alfort et rencontrer Madame Galstian pour la première fois ;
   – mars 2008, pour voir à Paris l'exposition sur les 30 ans de carrière du couturier Christian Lacroix à l'occasion de la Fête des femmes,
6) Différentes participations à des manifestations :
   – fête de la solidarité du Centre social (octobre 2007) ;
   – le Noël de l'association *Solidarfaubourg* ;
   – un après-midi sur l'Arménie lors de la semaine de la Fête des femmes ;
   – participation à la Fête du jeu (mai 2008) ;
   – repas arménien à Mons-en-Barœul (juin) ;
   – participation à la fête du quartier du Faubourg de Béthune (fin juin) ;
   – un stand à la Fête interculturelle de la Maison des associations (septembre) ;
7) Messe de Noël arménien et repas,
8) Fête de l'alphabet et le concert de l'*Armenian Folk quintet* (juin 2008) ;
9) Spectacle de *Yeraz* le 20 septembre dernier.

Financièrement, au 18 juillet 2008, l'association à récolté 4 955,24 euros et en a dépensé 4 493,14. Des dépenses sont encore à régler sur le concert de la fête de l'alphabet.

42 familles ont adhéré à l'association au cours de cette année 2007/2008.

Le Conseil d'administration de l'association est composé de 12 membres élus pour deux ans. 9 postes avaient été pourvus en 2007. Aucun membre n'a fait connaître son désir de quitter ses fonctions. Les 3 derniers postes sont pourvus au cours de l'assemblée générale.

L'assemblée générale a décidé à l'unanimité de ses membres :
1) de fixer la cotisation 2008/2009 à l'association à 15 euros par famille,
2) de fixer le prix de la gazette selon son nombre de pages à son prix coutant,
3) de laisser le coût des cours d'arménien à 5 euros par mois par enfant et de ne plus obliger la famille à cotiser à l'association pour cette activité.

Enfin les membres de l'association ont échangé sur les projets à monter pour l'année prochaine :

- Revoir *Yeraz* peut-être pour son spectacle de fin d'année scolaire en juin 2009, peut-être trouver le moyen de le faire revenir à Lille, au complet cette fois, et sur une vraie scène de théâtre ;
- Faire un film avec toutes nos vidéos sur notre expérience avec *Yeraz* ;
- Poursuivre les cours d'arménien et les renforcer ,
- Un projet photo pour la Fête des femmes / Fête des mères ;
- La messe de Noël arménien ;
- Une autre manifestation pour le mois de septembre 2009.

Assemblée générale extraordinaire du 20 décembre 2008

Le 20 décembre 2008, l'association *Ararat* a dû à nouveau se réunir compte tenu de la fin subite de la mise à disposition des salles dont elle bénéficiait au Centre social du Faubourg de Béthune. Après avoir recherché sans succès des solutions sur le quartier et dans le quartier voisin de Wazemmes, des possibilités semblent exister à Mons en Barœul où résident quelques-uns de nos membres. La mise à disposition de salles dans cette ville nécessite le transfert du siège social de l'association dans cette commune. Telle a été la décision de l'assemblée générale.

L'association a ensuite étudié la mise au point de la messe de Noël arménien pour le 10 janvier 2009.

«ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹՅԱՆ 2008 Թ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ

2008 թ. հոկտեմբերի 4-ին «Արարատ» միությունը գումարեց իր հերթական ընդհանուր ժողովը՝ նախորդ տարվա աշխատանքների արդյունքներն ամփոփելու համար:

Ամփոփվեցին այն իրադարձությունները, որոնց մասին դուք հնարավորություն եք ունեցել կարդալու միության թերթի էջերում.

1) միության վերաբացումը, որը սկսեց Մշակույթի տան օժանդակությամբ կազմակերպված շաբաթօրյա պա-րի պարապմունքներից և մի ծրագրից, որի նպատակն էր կապեր հաստատել Փարիզի շրջանում գործող «Երազ» պարի դպրոցի հետ, որի գեղարվեստական ղեկավար տիկին Գալստյանը 2008 թ. մարտ ամսից սկսած վարում էր պարի պարապմունքներ մեր երեխաների համար

2) շաբաթօրյա հայերենի դասընթացներ՝ երեխաների համար

3) միության պարբերաբար հավաքույթներ՝ դասընթացներին զուգահեռ

4) «Մա-Սիս» թերթի 5 համարների հրատարակում

5) երկու ուղևորության կազմակերպում.

– 2007 թ. նոյեմբերին Մեզոն-Ալֆորում «Երազ»ի ներկայացումը դիտելու և առաջին անգամ տիկին Գալստյանի հետ հանդիպելու համար

– 2008թ. մարտին Կանանց տոնի առթիվ Փարիզում Ք. Լաքրուայի աշխատանքային 30 տարվա գործունեությանը նվիրված ցուցահանդեսը դիտելու

Pot d'amitié après l'assemblée générale Թեթև ճաշկերույթ՝ ընդհանուր ժողովից հետո

6) մասնակցություն տարբեր բնույթի միջոցառումների.

– Մշակույթի տանը կազմակերպած համերաշխության տոնին (2007 թ. հոկտեմբեր)

– «Սոլիդարֆոբուր» միության կազմակերպած Ծննդյան տոնին

– Հայաստանին նվիրված օրվան՝ Կանանց տոնի շաբաթվա շրջանակներում

– Խաղերի տոնին (2008 թ. մայիս)

– հայկական խորտիկներով ճաշկերույթին՝ Մոնս ան Բարոլում (հունիս)

– Ֆոբուր դը Բեթյուն թաղամասի տոնին (հունիսի վերջ)

– Միությունների տան կազմակերպած Միջմշակութային տոնին՝ հայկական տաղավարով (դեկտեմբեր)

7) հայկական սուրբծննդյան պատարագի կազմակերպում և ճաշկերույթ

8) Այբբենարանի տոնի և «Հայկական Ֆոլկ Քինթեթ» համույթի համերգի կազմակերպումը (2008 թ. հունիս)

9) «Երազ»ի ներկայացումը՝ սեպտեմբերի 20-ին

Միությունը 2008 թ. հուլիսի 18-ի դրությամբ հավաքագրել էր 4955,24 և ծախսել՝4493.14 եվրո: Այբբենարանի տոնի հետ կապված որոշ ծախսեր դեռևս մնում են չվճարված:

2008/2009 թթ միությունն ուներ 42 ընտանիք-անդամ: Վարչական խորհուրդը բաղկացած է 12 անդամներից, որոնք ընտրվում են 2 տարի ժամկետով: Այդ տեղերի համար 2007 թ. ընտրվել էին 9 հոգի, որոնցից ոչ մեկը ցանկություն չի հայտնել հրաժարվել իր պարտականություններից: Վերջին 3 անդամներն ընտրվեցին ընդհանուր ժողովի ժամանակ:

Ընդհանուր ժողովին ներկա գտնվող անդամները միաձայն որոշեցին.

1) 2008/2009 թթ. միության անդամավճարների գումարը սահմանել 15 եվրո՝ընտանիքից

2) թերթի գինը սահմանել՝ հաշվի առնելով էջերի քանակը և ինքնարժեքը

3) հայերենի դասընթացների վարձը՝ ամիսը 5 եվրո յուրաքանչյուր երեխայի համար, թողնել անփոփոխ. դասընթացներին հաճախելը այլևս չի առնչվի միությանն անդամագրվելու հետ:

Վերջում կարծիքներ փոխանակվեցին հաջորդ տարվա անելիքների մասին.

. վերստին հանդիպում «Երազ»ի հետ, հնարավոր է գնալ դիտելու նրա 2009 թ. հունիսյան ներկայացումը՝ ուսումնական տարվա ավարտի առիթով, փորձել գտնել միջոցներ և «Երազ»ին, այս անգամ ամբողջ կազմով, կրկին հրավիրել Լիլ՝ ելույթ ունենալու, բայց արդեն իսկական համերգային բեմահարթակի վրա

. «Երազ»ի հետ ունեցած մեր փորձի մասին ստեղծել ֆիլմ՝ մեր տրամադրության տակ գտնվող տեսանյութերով

. շարունակել և կատարելագործել հայերենի դասընթացները

. լուսանկարահանման ծրագիր՝ նվիրված Կանանց կամ Մայրերի տոնին

. հայկական սուրբծննդյան պատարագի կազմակերպում

. 2009 թ. սեպտեմբերին մեկ այլ միջոցառման կազմակերպում

2008 թ. դեկտեմբերի 20-ի արտահերթ ընդհանուր ժողովը. 2008 թ. դեկտեմբերի 20-ին «Արարատ» միությունը ստիպված էր նորից ժողով գումարել՝ հաշվի առնելով այն անսպասելի հանգամանքը, որ Ֆոբուր դը Բեթյունի Մշակույթի տանը պատկանող տարածքները այլևս չեն կարող մեզ տրամադրվել: Այս և հարևան Ռուազեմի թաղամասերում որևէ տեղ գտնելու անհաջող փորձերից հետո հնարավոր է, որ մեզ համար բարենպաստ պայմաններ ստեղծվեն Մոնս ան Բարոլում, որտեղ բնակվում են միության անդամներից մի քանիսը: Այդ քաղաքում տրամադրության տակ տարածք ունենալը ենթադրում է այստեղ տեղափոխել մեր միության իրավաբանական հասցեն: Ահա այդ որոշումն էլ ընդունվեց միության ընդհանուր ժողովում: Այնուհետև ժողովը քննարկեց 2009 թ. հունվարի 10-ին կայանալիք հայկական սուրբծննդյան պատարագի կազմակերպման հետ կապված հարցեր:

Liste des membres de l'association *Ararat* (2008/2009) à la date du 1er janvier 2009 (15 euros par famille)
«Արարատ» միության անդամների ցուցակը (2008/2009) 2009 թ. հունվարի 1-ի դրությամբ (15 եվրո՝ ընտանիքից)

1. Allain	Annie et Louis
2. Arakelian	Vahram, Gagik et Gohar
3. Babikian	Siranouche
4. Bazinian/Mughnetsyan	Tatevik et Vahé
5. Bazinian	Edouard et Nariné
6. Bazinian	Youri et Lilik
7. Bouroult	Claude
8. Davtian/Yeritsian	Karen et Silva
9. Dupont	Bernard et Maryline
10. Galstyan/Lamarche	Garik et Louisette
11. Gambarian/Meloyan	Haïk et Gohar
12. Gharibian	Guevorg et Jasmine
13. Ghazaryan/Babikian	Samvel et Lusiné
14. Hanonik	Dikran et Tamar
15. Haroutiounian	Karen
16. Jakmakian	Garo et Ghislaine
17. Kasparian	Jacqueline, Samvel et Angela
18. Khachatryan	Arminé
19. Lmntsian	Razmik, Jacqueline et Garik
20. Mkhitaryan/Barseghyan	Margarit, Vahram et Gayane
21. Parsadanian	Armen et Lianna
22. Petrosyan/Arakelian	Artak et Mariam
23. Sahakian	Armen et Elena
24. Shirinyan/Hakobyan	Seyran et Anna
25. Sulikashvili	Natalia
26. Vanuxeem/Stepanian	Bruno et Lena
27. Voskritchyan	Ararat et Khristina
28. Yeghshatyan	Manvel, Samson et Aïda
29. Yeghshatyan	Vahé et Irina
30. Zakarian	Karen et Christina
31. Zakarian	Marie et Haroutyoun

Cuisine

GÂTEAU AU CAFÉ ET AUX POIRES

Ingrédients

Un demi-verre de lait, deux cuillères à soupe de beurre fondu, 1 œuf, 150 gr de farine, 1 cuillère à thé de levure, 100 gr de sucre de canne en poudre, 1 cuillère à soupe de café soluble, 1 grosse poire

Préparation :

- Faire fondre le beurre, le mélanger au lait et avec l'œuf battu.
- Dans un grand récipient mélanger la farine, une cuillère à soupe de sucre et le café. Ajouter délicatement le mélange de lait et mélanger pour avoir une masse homogène.
- Laver la poire et la couper en fines tranches.
- Dans une poêle d'un diamètre de 15 cm mettre 50ml d'eau, ajouter le reste du sucre, chauffer à feu moyen et mélanger constamment la préparation jusqu'à ce que le sucre fonde. Ajouter la poire et faire bouillir. Puis réduire le feu et faire cuire encore 3 minutes. Mettre hors du feu.
- Faire chauffer le four à 180°. Ajouter la pâte sur la préparation à la poire dans la poêle et mettre au four 25 minutes.
- Sortir du four la préparation et retourner immédiatement le gâteau dans un plat de même dimension (il faut le faire très vite pour que le sirop ne colle pas à la poêle en refroidissant)

Bon appétit !

Խոհանոց

ՍՈՒՐՃԻ ԵՎ ՏԱՆՁԻ ԿԱՐԿԱՆԴԱԿ

Բաղադրամասեր

0,5 բաժակ կաթ, 2 ճաշի գդալ յուղ, 1 ձու, 150 գ ալյուր, 1 թեյի գդալ փխրեցուցիչ, 100 գ շաքարեղեգի շաքարավազ, 1 ճաշի գդալ լուծվող սուրճ, 1 տանձ

Պատրաստման եղանակը

- Կարագը հալեցնել, խառնել կաթի և հարած ձվի հետ:
- Մեծ թասի մեջ խառնել ալյուրը, 1 ճաշի գդալ շաքարավազը և սուրճը: Զգուշորեն ավելացնել կաթի խառնուրդը և խառնել մինչև միատարր զանգված դառնալը:
- Տանձը լվանալ և բարակ շերտերով կտրել:
- 15 սմ տրամագծով թավայի մեջ լցնել 50մլ ջուր, ավելացնել մնացած շաքարավազը, դնել ոչ ուժեղ կրակի վրա և եփել՝ անընդհատ խառնելով, մինչև շաքարավազը հալվի: Ավելացնել տանձը, եռացնել, կրակը մեղմացնել, եփել ևս 3 րոպե, վերցնել կրակի վրայից:
- Ջեռոցը տաքացնել 180 աստիճան: Թավայի պարունակության վրա լցնել պատրաստի խմորը: Դնել ջեռոցը 25 րոպե:
- Հանել ջեռոցից, անմիջապես շուռ տալ համապատասխան չափի ափսեի վրա (պետք է շատ արագ անել, որ օշարակը սառչելով չկպչի թավային):

Բարի ախորժակ

Pour contact et pour toute remarque, vous pouvez nous joindre aux adresses suivantes :
Par mail : aadelille@voila.fr
Par courrier : 4 impasse du clos Ferrer, 59 000, Lille-Fives
Par téléphone : 03.20.05.42.25 ou 03.20.57.45.06

Այս համարին առնչվող բոլոր դիտողությունները Դուք կարող եք մեզ հայտնել հետևյալ հասցեներով՝
Էլեկտրոնային կայք՝ aadelille@voila.fr
Փոստային հասցե՝ 4 impasse du clos Ferrer, 59 000, Lille-Fives
Հեռախոսներ՝ 03.20.05.42.25 կամ 03.20.57.45.06

ASSOCIATION ARARAT
65 Rue Saint Bernard
59000, Lille

BULLETIN D'ADHESION

Nom, Prénom ____

Adresse ____

____

Mail ________________________ Téléphone _______________

Adhère à l'association ARARAT pour l'année 2008/2009
a payé une adhésion de 15 euros (par famille)
(Date et Signature)

Responsable de publication en français : Louisette Lamarche, Garik Galstyan
Responsable de publication en arménien : Garik Galstyan,
Traduction : Garik Galstyan, Hayk Gambarian, Vahram Arakelian, Hovhannes Arakelian

Ֆրանսերեն հրատարակչության պատասխանատու՝ Լուիզեթ Լամաղշ, Գարիկ Գալստյան
Հայերեն հրատարակչության պատասխանատու՝ Գարիկ Գալստյան,
Թարգմանությունները՝ Գարիկ Գալստյանի, Հայկ Ղամբարյանի, Վահրամ Առաքելյանի , Հովհաննես Առաքելյանի

Imprimé par nos soins.
À ne pas jeter sur la voie publique.

Տպագրված է մեր միջոցներով:
Չգցե՛լ հասարակական վայրերում: